



Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մատենադարանի

և հրատարակչության տնօրեն

«ԱԶԱՏ ԵԿԵՂԵՑԻ» ԶԱՆԿԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԺՄԱՆ ՎԱՆՃԱՆԸ¹

Տ. Տ. ԳԵԼՈՐԳ Ե. ՍՈՒՐԵՆՅԱՆԻ ԱՄԵՆԱՅՆ ԴԱՅՈՂ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 1924 թ.
սեպտեմբերի 5-ի եւ 10-ի կոնդակները

Ի. դարի առաջին քառորդը խորհրդային Միության տարածքում դարձավ պետական հակաեկեղեցական քաղաքականության, անաստվածության գաղափարախոսության արմատավորման շրջան: Բոլշևիկյան իշխանությունների՝ եկեղեցական գույքի բռնագրավման արշավը լուրջ հարված հասցրեց եկեղեցուն՝ որպես հոգեւոր կառույցի: Իշխանությունները վախենում էին, որ եկեղեցու հեղինակությունը կբարձրանա եւ ազդեցությունը կուժեղանա ժողովրդի շրջանում, ուստի ձգտում էին ամեն կերպ վարկաբեկել այն հետեւյալ պատճառներով՝

ա. Որպես «վտանգ» էին դիտարկում եկեղեցու նկատելի ազդեցությունը ժողովրդի հոգեւոր կյանքում եւ բարոյական արժեհամակարգի ձեւավորման վրա, ինչը հակասում էր մարքսիստական գաղափարախոսությանն ու բոլշևիկյան քարոզչությանը. հասարակության շրջանում եկեղեցին ընկալվում էր որպես համայնավարական գաղափարախոսության հետ «մրցակցող ուժ».

բ. խորհրդային իշխանություններին անհրաժեշտ էր արագորեն վերացնել բոլոր նախկին պետական կառույցները, որոնք հասարակության գիտակցության մեջ նույնացվում էին հին կարգերի, արժեքների, դարավոր սովորույթների եւ ավանդույթների հետ.

¹* Ստացվել է՝ 9.09.2025, գրախոսվել է՝ 29.10.2025: Էլ. հասցե՝ terararatqahana@gmail.com:

գ. Աստվածամերժության (աթեիստական) գաղափարախոսությունը չէր տեղավորվում հասարակական գիտակցության մեջ ձեւավորված ավանդական կրոնական աշխարհի պատկերում.

դ. Հոգեւորականությունը համարվում էր «դասակարգային օտար տարր» եւ նոր հասարակության մեջ այլեւս չէր կարող «իր տեղն ունենալ».

ե. Խորհրդային իշխանությունը, ունենալով վարչական անսահմանափակ միջոցներ ու լծակներ, հնարավորություն ստացավ պետականացելու Եկեղեցուն պատկանող ունեցվածքն ու սեփականությունը²:

1922–1923 թթ. ընթացքում Խորհրդային Ռուսաստանում բռնաճնշումներն ենթարկվեցին հազարավոր հոգեւորականներ (2691 քահանա, 5409 վանական, 32 մետրոպոլիտ եւ արքեպիսկոպոսներ)՝ բանտարկվեցին, աքսորվեցին, գնդակահարվեցին, իսկ Տիխոն պատրիարքը ձերբակալվեց³:

Ռուսաստանյան փորձը ցույց տվեց, որ Խորհրդային իշխանությունները ձգտում էին ոչ միայն սահմանափակել Եկեղեցու գործունեությունը, այլ նաեւ ներսից պառակտել, քայքայել այն: Այս նպատակով՝ 1922 թ. Ռուսաստանում ձեւավորվեց «Կենդանի եկեղեցի» (Живая церковь) շարժումը, որը փորձեց հակադրվել Ռուս Ուղղափառ Եկեղեցուն եւ հանդես գալ որպէս «բարեփոխված» ու «ժողովրդին մոտ» եկեղեցի: Այս երեւույթն առաջին հերթին ուներ քաղաքական, այլ ոչ թե կրոնական բնույթ:

Նմանօրինակ իրադարձություններ տեղի ունեցան նաեւ հայ իրականության մեջ: 1924–1928 թթ. ձեւավորվեց «Ազատ եկեղեցի» կոչված շարժումը, որի նախաձեռնողները հայտարարում էին, թե մտադիր են «բարեփոխել» Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին: Իրականում այդ շարժումը Խորհրդային իշխանությունների գործիքն էր՝ նպատակամիտված Հայ Եկեղեցու ներսում պառակտում առաջացնելուն եւ նրա ազգային դերակատարությունը սահմանափակելուն: Ինչպէս ցույց են տալիս պատմական աղբյուրները՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին դարեր շարունակ եղել է ոչ միայն հոգեւոր կառույց, այլ նաեւ՝ ազգային ինքնության կրող ու պահպան: Հենց այս հանգամանքն էլ այն դարձնում էր Խորհրդային իշխանության համար «հակահեղափոխական» կառույց⁴, քանի որ Հայ

² Տէս Լ. ЗАХАРОВА, Отношения власти и церкви в начале 1920-х годов: кампания по изъятию церковных ценностей, «Вестник Самарского государственного университета», № 2 (103), 2013, էջ 69:

³ Տէս Լ. ЗАХАРОВА, նշ. աշխ., էջ 67:

⁴ Ա. Մանուկյանը գրում է. «Ինչպէս ցույց են տալիս ուսումնասիրված արխիվային գործերը, այդ մարդասիրական քայլերը դեպի «ժողովրդի թշնամի» հայտարարված անձերը՝ եւս

Եկեղեցին պահպանելով իր ազգային-հոգեւոր դերը՝ հակասում էր աստվածամերժ նոր պետության գաղափարախոսությունը⁵:

Խորհրդային հակաեկեղեցական քաղաքականության առաջին հարվածներն ուղղվեցին Ռուս Ուղղափառ Եկեղեցու դեմ: 1921–1922 թթ. Պոլովոժիեի սովի պայմաններում եւ այդ պատրվակով իրականացվեց եկեղեցական ունեցվածքի բռնագրավման լայնածավալ արշավ: Թեեւ այս քայլն արդարացվում եւ որակվում էր որպէս «օգնություն սովահար բնակչությանը», սակայն իրական նպատակը քաղաքական էր՝ խարխիւլ Եկեղեցու հեղինակությունը, ունեզրկել այն եւ ուժեղացնել պետության վերահսկողությունը⁶: Հետագայում նույն գործելաոճը կիրառվեց նաեւ Խորհրդային Միության կազմում գտնվող մյուս ժողովուրդների եկեղեցիների նկատմամբ:

Հայ իրականության մեջ վերոնշյալ շարժման առաջին կենտրոնը ձեւավորվեց Թիֆլիսում: Այստեղ խորհրդային կառույցների աջակցությամբ մի խումբ հոգեւորականներ հայտարարեցին «Ազատ եկեղեցու» ստեղծման մասին: Շարժումը շեշտադրում էր Եկեղեցու «ժողովրդավարացումը», «հասարակական վերահսկողությունը» եւ «հնացած ավանդույթներից ազատագրումը»: Իրականում, սակայն, այս գործընթացը լիովին վերահսկում էին խորհրդային հատուկ ծառայություններն ու հակաեկեղեցական կազմակերպությունները: 1924–1928 թթ. ընթացքում «Ազատ եկեղեցին» փորձեց իր ազդեցությունը տարածել Հայաստանի թեմերում, եւ բախում տեղի ունեցավ այս շարժման նախաձեռնողների եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեւ: Ժամանակի հայրապետ Գեորգ Ե. Սուրենյանցը (1911–1930 թթ.) վճռականորեն մերժեց շարժման պահանջները եւ դիմեց թե՛ վարչական, թե՛ կանոնական միջոցների՝ պայքարելով Եկեղեցու ներքին միասնությունը պահպանելու համար⁷:

օգտագործվում էին կրոնական գործիչների, հատկապես՝ նրա վերին աստիճաններին գտնվող հոգեւորականներին մեղադրական թխելիս». Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Հայ Առաքելական Եկեղեցու բռնագրաված հոգեւորականները 1930–1938 թթ. (ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի), Երեւան, 1997, էջ 16:

⁵ Տէս Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Խորհրդային իշխանության հակակրոնական պաշարը 1920–1930-ական թվականներին. Քաղաքագիտական վերլուծություն, «Էջմիածին», 2022, Ձ., էջ 101–102, հմմտ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունը Խորհրդային Հայաստանում 1920–1930-ական թվականներին, Ս. Էջմիածին, 2025, էջ 95:

⁶ Տէս Ս. ЗАХАРОВА, նշ. աշխ., էջ 64:

⁷ Տէս Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունը Խորհրդային Հայաստանում 1920–1930-ական թվականներին, Ս. Էջմիածին, 2025, էջ 143:

Խորհրդային իշխանությունները նպատակ ունեին «Ազատ եկեղեցու» միջոցով թուլացնել Հայ Եկեղեցու՝ ազգային ինքնության պահպանման գործառույթը, Եկեղեցին բաժանել հակադիր ճամբարների եւ ստեղծել «հնազանդ» հոգեւորականների խավ, որի միջոցով հնարավոր կլիներ «գրոհել Հայ Առաքելական Եկեղեցու դիրքերը»⁸: Սակայն Մայր Աթոռի վճռական դիրքորոշումը, ինչպես նաեւ հավատացյալ ժողովրդի աջակցությունը հանգեցրին շարժման ձախողմանը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Գեւորգ Ե. Սուրենյանցի գլխավորությամբ, դատապարտեց շարժման գաղափարախոսությունը եւ Եկեղեցուց վտարեց այն հոգեւորականներին, որոնք միացել էին այդ եկեղեցաքանդ գործընթացին⁹:

1928 թ. սկսած «Ազատ եկեղեցու» ազդեցությունը նվազեց, եւ այն աստիճանաբար դադարեց գործելուց: Այսպիսով՝ «Ազատ եկեղեցի»-ն մնաց որպես խորհրդային հակաեկեղեցական քաղաքականության անհաջող փորձ՝ կիրառված հայ իրականության մեջ: Վավերագրերը փաստում են, որ «Կենդանի եկեղեցու» ռուսաստանյան նախագեկյալ հնարավոր չեղավ լիովին կրկնել Հայաստանում: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ազգային-հոգեւոր ինքնավարության եւ հայ ժողովրդի դիմադրության շնորհիվ այդ շարժումը ձախողվեց:

Պատմական այս փորձը ցույց է տալիս, որ աշխարհիկ իշխանության ցանկացած միջամտություն, որի նպատակը Եկեղեցու ներքին միասնությունը պառակտելն ու նրա ազգային-հոգեւոր դերը սահմանափակելն է, վերջ ի վերջո դատապարտված է ձախողման:

Սույն հոդվածի շրջանակում ներկայացվում են մինչ այժմ չհրապարակված փաստաթղթեր՝ Տ. Տ. Գեւորգ Ե. Սուրենյանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի 1924 թ. սեպտեմբերի 5-ի եւ 10-ի կոնդակները, որոնք վերաբերում են «Ազատ եկեղեցի» շարժման գործուն մասնակիցների՝ Աշոտ Եպիսկոպոս Շախյանի եւ Բենիկ վարդապետ Տեր-Դանիելյանի կարգալուծությանը¹⁰: Հայրապետական կոնդակները հրապարակվում են ուղղադրական եւ կետադրական չնչին ընդմիջարկությամբ:

⁸ Տե՛ս Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆՑ, Հայ Առաքելական Եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երեւան, 1994, էջ 37:

⁹ Տե՛ս Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունը Խորհրդային Հայաստանում 1920–1930-ական թվականներին, էջ 143:

¹⁰ Ցավոք, մեզ չհաջողվեց գտնել Տ. Տ. Գեւորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսի 1926 թ. հունիսի 14-ի թիվ 553 կոնդակը, որով կարգալույծ էր հռչակվում «Ազատ եկեղեցի» հակաեկեղե-

**Տ. Տ. Գեւորգ Ե. Սուրենյանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի
1924 թ. սեպտեմբերի 5-ի թիվ 575 կոնդակը՝
Աշոտ եպս. Շախյանի կարգալուծության մասին**

ԳԵՂՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ
ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ

Ամենապատիւ պատրիարքի Հայոց Երուսաղէմի Տ. Եղիշէ արքեպիսկոպոսի, գերաշնորհ պատրիարքական տեղապահի Հայոց Կ. Պօլսոյ Տ. Գեւորգ արքեպիսկոպոսի, գերապատիւ առաջնորդաց, արքեպիսկոպոսաց եւ եպիսկոպոսաց, բարձրապատիւ վարդապետաց եւ հոգեւոր հովուաց, արժանապատիւ աւագերիցանց եւ ֆահանայից, կրօնական ժողովոց եւ թեմական խորհրդոց Հայոց, եկեղեցական ծխական հոգաբարձութեանց եւ վարչութեանց, մեծարգոյ երէցփոխանաց եւ կառավարչաց Ս. եկեղեցեաց Հայոց եւ ամենայն հաւատացելոց, հարազատ որդւոց Մայր Աթոռոյ Յիսուսաւանդ ողջոյն եւ օրհնութիւն ի բազմավիշտ Հայրապետէս հանուրց Հայոց:

Հոգաբարձական խորհուրդ Հայոց եւ հաւատացեալ ժողովուրդ Լենինական (Ալէքսանդրապօլ) ֆաղափի Շիրակայ ի 28 օգոստոսի տարւոյս ընդ N 36 յայտարարագրութեամբ բողոքելով ընդդէմ դատապարտելի գործոց առաջնորդի թեմին Հայոց Շիրակայ՝ Աշոտ եպիսկոպոսի, որ հրատարակեալ է զգրօյլ ընդ վերնագրով «Այլաստեռուած կրօն», նկարագրէ գյուղումնալի վիճակ հաւատացելոց հայոց եւ խնդրէ ի մէնջ փութով զնա հեռացուցանել յառաջնորդական պաշտօնէ եւ արկանիլ զնա ընդ պատասխանատւութեամբ:

«Ի գումարման Գերագոյն հոգեւոր խորհրդոյ» ի 1 սեպտեմբեր ամսոյս, ի ֆնին առեալ զյանցաւոր ընթացս եւ զյեղեղուկ բնատուրութիւն Աշոտ եպիսկոպոսի, նաեւ զգործս նորա յանցելում, Մեք անհրաժեշտ վարկափ վասն անդորրութեան հաւատացեալ ժողովրդեան մերոյ հեռացուցանել զնա յառաջնորդութենէ եւ պատուիրեցաք մմա երթալ ի վանս Հառիճոյ ցվախնանական տնօրէնութիւն Մեր՝ յուսալով զի յանցաւոր եպիսկոպոսն այն յառանձնութեան

իւրում ի զղշումն եւ ի զգաստութիւն գայցէ: Սակայն յ2 սեպտեմբերի ընկալաք ի նմանէ գլեռագայ հեռագիր՝ «Ինքս հրաժարուեցի էջմիածնի միաբանութիւնից, առաջնորդութիւնից, վերադարձնում եմ Ձեր շնորհած արժութիւնը՝ մնալով Քրիստոսի եկեղեցում եպիսկոպոս՝ ազատ Ձեր իրաւասութիւնից»:

Յետ այսորիկ Գերագոյն հոգեւոր խորհուրդս, եպիսկոպոսական դասն եւ միաբանական ժողովն Մայր Աթոռոյս, քննելով զամենայն հանգամանս եւ տեսանելով, զի Աշոտ եպիսկոպոսն մոլորեալ յողիղ նանապարհաց եւ ուխտադրութ լեալ, անկեալ կայ ի դաւադրական խարդաւանս ընդդէմ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյս եւ Մայր Աթոռոյս, ամենեւեան միաձայնութեամբ եկին ի վախճանական եզրակացութիւն, զի անհրաժեշտ է հեռացուցանել զԱշոտ եպիսկոպոս Շախեան ի միաբանութենէ Սրբոյ էջմիածնի եւ կարգալոյծ առնել զնա:

Արդ, ի նկատ առեալ մեր զամենայն հանգամանս գործոյս զչարսխորհուրդ գնացս մոլորեալ Աշոտ եպիսկոպոսի, որ, դժբախտաբար, է կոյր գործի շարութեան, յայսմ դժուարակիր ժամանակիս բազմատանջ ազգային Ս. Եկեղեցոյս, եւ արժանի խստագոյն դատապարտութեան եւ պատժոց զնա համարելով՝ Մեք Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Պետ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյս, հաստատելով զեզրակացութիւն Գերագոյն հոգեւոր խորհրդոյ, եպիսկոպոսական դասու եւ միաբանական ժողովոյ Մայր Աթոռոյս, այսու հայրապետական կոնդակաւս հեռացուցանեմք զԱշոտ եպիսկոպոս Շախեան ի միաբանական ուխտէ Սրբոյ էջմիածնի եւ զրկեմք զնա յեպիսկոպոսական աստիճանէ եւ ի հոգեւոր կոչմանէ՝ դասելով զնա ի կարգ աշխարհականաց:

Զայս հայրապետական կարգադրութենէս ծանուցանելով Ձեզ՝ լիայոյս եմք, զի դուք ամենեւեան, սիրելի՛ եղբարք եւ որդիակք Մեր, միախորհուրդ եւ միակամ դատապարտեսցիք զդաւադիր գործս Աշոտ նախկին եպիսկոպոսի եւ սիրով եւ անձնուիրութեամբ փարեսցիք զազգային Սուրբ Եկեղեցեալ մերով: Իսկ Մեք աղօթեմք առ Աստուած պահել եւ պահպանել միշտ անսասան եւ անխախտ զՍուրբ Եկեղեցին Հայաստանեայց եւ զՄայր Աթոռս Ս. Էջմիածին յամենայն վտանգից եւ ի փորձութեանց: «Ո՛ղջ լերով, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն»:

Ի 5 սեպտեմբերի, 1924 ամի

Թ. 575

Ի Ս. էջմիածին

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 521, թ. 301–302, ձեռագիր:

**Տ. Տ. Գեւորգ Ե. Սուրենյանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի
1924 թ. սեպտեմբերի 10-ի թիվ 593 կոնդակը՝
Բենիկ ծ. վրդ. Տեր-Ռանիեյանի կարգալուծության մասին**

ԳԵՌՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷԶՄԻԱԾՆԻ

Գերապատիւ եւ բարձրապատիւ տեարց անդամոց միաբանական ժողովոյ Սրբոյ Էջմիածնի, հարազատից Մայր Աթոռոյս ողջոյն եւ օրհնութիւն հայրապետական:

Արդէն իսկ գիտէք, զի հայրապետական կոնդակաւ Մերով, ի 5 սեպտեմբեր] ամսոյս ընդ համարաւ 575, կարգալոյծ արարաբ գԱշոտ նախկին եպիսկոպոս՝ զրկելով զնա յեպիսկոպոսական աստիճանէ եւ ի հոգետօր կարգէ վասն ուխտադրութեան եւ դաւադիր ընթացից եւ գործոց իւրոց:

Յայտնի են ձեզ ամենեցուն նաեւ անվայել վարք եւ բարք եւ ըստ ամենայնի դատապարտելի գործք Բենիկ ծ. վարդապետի, որ հակառակ բազմադիմի յորդորանաց եւ նախազգուշութեանց Մերոց, Գերագոյն հոգետօր խորհրդոյ եւ միաբանակցաց իւրոց, ոչ ցանկացաւ գալ յուղղութիւնս եւ ի զգաստութիւնս, այլ, ընդհակառակն իսպառ կուրացեալ յանձնական վրէժիւնորութենէ եւ անկեալ ընդ ամբարիշտ կրիւք իւրովք, զբաղեալ կայ այժմ գրպարտութեամբ եւ դաւադրութեամբ ընդդէմ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյս, Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի եւ միաբանութեանդ:

Զայդ ամենայն ի քնին առեալ ի գումարման միաբանական ժողովոյդ յ7 սեպտեմբեր] ամսոյս, մատուցիք զարձանագրութիւն ի տնօրէնութիւն Մեր, միաձայն որոշմամբ խնդրելով ի Մենջ զրկել զնա ի հոգետօր կարգէ:

Արդ, ի նկատ առեալ Մեր զարձանագրութիւն միաբանական ժողովոյդ, զեզրակացութիւն Գերագոյն հոգետօր խորհրդոյս եւ զամենայն հանգամանս, վերաբերեալս շարամիտ գործոց Բենիկ վարդապետի՝ Մեք՝ Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Պետ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյս, այսու հայրապետական կոնդակաւս հեռացուցանեմք զԲենիկ վարդապետն ի միաբանական ուխտէ Սրբոյ Էջմիածնի

և զրկեմք զնա ի հոգեւոր աստիճանէ եւ կոշմանէ՝ դասելով զնա ի կարգ աշխարհականաց:

Լիայոյս եմք, զի ամենայն միաբանք Մայր Աթոռոյս, որք աստ եւ ի թմն-
րայս կան, առաւել գօտէպնդեալ անկեղծ սիրով եւ անձնութիւնութեամբ առ
Մայր Աթոռու Ս. Էջմիածին, գործեսցին ամենայն եռանդեամբ յօգուտ հաւա-
տացեալ ժողովրդեան մերոյ եւ ի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկե-
ղեցոյս:

Ո՛ղջ լեռնք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Ի 10 սեպ[տեմբեր] 1924 ամի

Թ. 593

Ս. Էջմիածին

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 521, թ. 303–304, ձեռագիր:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Սուրբ Էջմիածին, Գևորգ Ե Սուրբնյանց Կաթողիկոս, Աշոտ եպս. Շախյան,
Բենիկ Ծ. վրդ. Տեր-Դանիելյան, կոնդակ, հակաեկեղեցական շարժում, «Ազատ
եկեղեցի», «Կենդանի եկեղեցի»

РЕЗЮМЕ

В 1920-е годы в РСФСР проводилась систематическая антирелигиозная политика, направленная на ослабление влияния Церкви и подрыв её внутренне-
него единства. В этом контексте в 1924–1928 годах в Армении возникло так
называемое движение «Свободная церковь», инициированное советскими вла-
стями с целью подорвать единство и национальную роль Армянской Апостоль-
ской Святой Церкви. Это движение, следуя примеру русской «Живой церкви»,
стремилось формально «демократизировать» Церковь, но фактически служило
политическим интересам.

Католикос Всех Армян Георг V Суренянц решительно противостоял это-
му движению, осудив и лишив сана его активных деятелей — епископа Ашота

թիւն մեր, որոշեալն որոշեալ թիւերով ի միեզ պիտի մնայ ի հոգեւոր
կարգի:

Եւրդ, ի նկատ տեսաւ մեր արարչական օրհնութիւնն միասնական ծով
վրդ, վերականգնութիւնն Գրգռեալն Հոգեւոր/արարչական և արմիքն հանգ
մուն, մերմիտրիական զարմիր գործայ թիւնն վարդապետի, ընդ
Դարապոյն Վարդարիտ-Զարադիթու ամենայն Հայոց և Վրդ Հայա
պոյնեւայ շնորհակցուն Ա. Երեմիայայ, այսու Հայապետական
կոնգրեսիսն և Երեսայ-յանի մի թիւն վարդապետի ի միաս
նական ուրիշ երես, Էջմիածնի և Կրկնի մի ի հոգեւոր արարչ
ական և ի կոնգրեսի, Գրգռեալն մի ի կարգ արարչականայ:

Դարապոյն, ի մի ամենայն միասնութիւնն մեր Էջմիածնայ, որ արդ և ի
թիւնգրայ և մի, աստիւզ գործարարիս անկողնի սիրով և անցնալի
արթնութիւնն մի մեր Էջմիածն Ա. Էջմիածնի, գործարարի, ամենայն
իւրաքանչեւ յոգար հասարակայ ծով/արմիքն միայ և իւրաքան
ստ-թիւն Հայապետական Ա. Երեմիայայ:

Ողջ Լրտ-ի, արարչական շնորհով Ա. Հոգեւոր և արմիք ի միեզ, ամեն:

Ի 10: Կր. 1924 ամի

Թ. 593

Ա. Էջմիածնի:

Էրդ Դարապոյն Զեմ Գրգռ...

Բարձրապետ Ա. Գրգռ Դարապետի Գրգռ Դարապետ
արարչական, միասնութիւնն և Կարապետի մեր Էջմիածնայ արարչ
Էրեմիական Հայապետական:

Էրեմիական Ա. Արարչական Երեմիական Հայոց Կոնգրեսի Կարա
պետ և Կարապետական Դարապետ Բարձրագոյն Գրգռայ
Արարչի Զեմ Էջմիածնի արարչական Գրգռ-Դարապետ
Կարապետական և Կարապետական Կարապետական Էրեմիական

Шахьяна и протоархимандрита Беника Тер-Даниеляна — своими кондаками (энциклика) от 5 и 10 сентября 1924 года. Его решительные действия и поддержка верующего народа предотвратили раскол Церкви.

В результате движение «Свободная церковь» потерпело неудачу, став неудачной попыткой советской антирелигиозной политики в армянской действительности. Кондаки Георга V Суренянца свидетельствуют о непоколебимой верности Святого Эчмиадзина делу сохранения национально-духовной идентичности.

SUMMARY

In the 1920s, the Soviet Union carried out a systematic anti-religious policy aimed at weakening the influence of the Church and undermining her internal unity. In this context, between 1924 and 1928, the so-called “Free Church” movement emerged in Armenia, initiated by the Soviet authorities with the goal of disrupting the unity and national role of the Armenian Apostolic Holy Church. Following the example of the Russian “Living Church”, this movement sought to “democratize” the Church in form, but in fact served political interests.

Catholicos of All Armenians Gevork V Surenyants firmly opposed this movement, condemning and defrocking its active leaders — Bishop Ashot Shakhyan and Proto-Archimandrite Benik Ter-Danielyan — by his encyclicals of September 5 and 10, 1924. His decisive actions, supported by the faithful, prevented the division of the Church.

As a result, the “Free Church” movement failed, becoming an unsuccessful attempt of the Soviet anti-religious policy in the Armenian reality. The encyclicals of Gevork V Surenyants testify to the unwavering loyalty of Holy Etchmiadzin to the cause of preserving national and spiritual identity.

